

բազայման կերպով սուղ էին, այդ իսկ պատճառաւ՝ շատերու անմտոջելի. Գարեգին ճար-
պիկութիւնը կ'ունենայ յաճախորդներու գիջում ընելու՝ գիները քիչ շատ նրապարակի գիներուն
մօտեցունելով. Արամեան օգտուելով այս եղանակէն՝ լիուլի կը վարձատրէ գինը ու իր տպա-
րանին տնօրէնութիւնը կը յանձնէ անոր, պաշտօն գոր մինչեւ տպարանատիրոջ մասը շարունակ-
կամ է: 1870ական բուսականներուն՝ Արամեան միսիօնարաց գործերը ստանձնելով բաւական
օգտուած է, նաեւ իր նրատարակած ձօխ տարեցոյցներով են: Ճանիկի մանեն վերջ, ժառան-
գորդները տպարանին վերատեսուջ կը կարգեն Պաղտատչեանը որ պահ մը իր տպագրած գիր-
քերուն ճակտին՝ փակագիծի մէջ «Արամեան» անունն ալ դրոշմած է: 1880 ին կը տեսնենք
գինք սեպն. տպարանի մը տէր, Սուքան Համամ ճառտոսի, թիւ 14, Զարդարեան քրքրվա-
ճառանցի վրայ, որուն գետնայարկը կը ջատկացուի իր նրատարակութեանց, իր գրատուն:
Իր նորանստաս տպարանին համար պէտք եղած եւրպ. տառեր, գանազան զարդեր, արա-
գառիպ մեքենաներ և կազմարարական գործիներ յատկապէս Եւրոպայէն բերել կու տայ, և
Արամեան տառերէն իր 70 տեսակ ձուլել տալով գործի կ'սկսի, լոյս ընծայելով ծանօթ գրա-
գետներու բազմաթիւ նշխանակութիւններն ու արարքերականները. — Կրք. խնդրոյն վրայ: Շարժ-
մունք երկնային մարմնոց: Շրջագայութիւն: Աղայա (1880): Գրիչ և սուր: Օրացոյց (1881 են
ընդհատարար մինչեւ ցվերջ): Գրական գրօսանք: Բնութիւն մեքոտի վրայ (1882): Գր. և
խմտ. շարժում (1883-7): Երկրագունտ (1883-8): Գրագիտութիւն: Թորոս աղբար: Մաշիկ
արդի հայ մատենագր. (1885): Արբա Բօնարանքէն: Մարդիկ և իրք: Հայ. մատենագր. (1885):
Իրա: Գրամ: Ընկերային նամակների: Տնտես (885-8): Պատմութիւն Ս. Փրկչի: Լոյս և
ստուերք (1887): Խօսնակ: Սոխակ (1888): Աղջկանց դատարարական ճառ. (1890): Պատ-
կեր աշխ. գրականութեան: Նուպարեան բառգիրք (1892): Օրինագիրք ամուսնութեան: Ան-
գիր դպրութիւն: Շար հայ կենսագրութեանց (1893): Աշխ. աւետարան: Արեղւոճագ (1894):
Մկրեան Աղօթագիրք: Աստուածաշունչ (մեծադիր, 1895, մինչ 1892 ին՝ լոկ Հնգամատենան):
Սխոթմանք ուսմկին: Թշուառ. ընտանիքը: Տեմիրճիպաշեան բառգիրք (1896): — Արմենասին ազ-
նրացման ու կատարելագործման նետամուտ՝ Պաղտատչեան կը կատարէ կարեւոր գիտ մը.
կը յօրինէ մեքենայ մը փոքր չափով, 1 ժամուան մէջ միանուագ քառագոյն 20-30 հազար
օրինակ դրոշմոջ: Սակայն իր տարապգման գրադրումներուն պատճառաւ՝ միջոց չունենալով
նակողութիւն կատարելու 1896 ի Պատի Օրացոյցին տպագրութեան վրայ, կը դատապարտուի
53 օր բանտի և տպարան բանեցունելու իրաւունքէ զրկման: Խնդիրը կը կայանար սպազ
անուշադրութեան մը վրայ որ կատարութեան մը սխալմունքն էր. Սուքան Համաթի գաւա-
կալութեան յատուկ՝ նոյն ատենի պայմանադրական անականն էր **մէլամին մէնուս** (= բա-
րբրատիկ), մինչ «մենուս» ի տեղ **մէլուս** շարուած էր
որ ճիշդ նակառակ իմաստը կու տայ... — Այնուհետեւ
նոյն տպարանը յաջորդարար վարած են Մ. Սարբեան և
Վ. Կան վրդ. Պարտիզակցի: Սահմ. նո. չափումին, Պաղ-
տատչեան կրկին իր անուամբ կը շարունակէ իր տպարանը
որ անցեալ տարի այրելուն նետուանօք բանտարկութիւն
մը կ'ունենայ իր տնօրէնին՝ Յ. Ասիկեանի նետ, որոնք
յետոյ ազատ կ'արձակուին: Վերսին կը հիմնէ գործա-
տուն մը Կ. Պոլիս, Սիրբէսի, թիւ 18, իսկ այժմ Սալ-
գրմ Սեօյիտ, թիւ 41: Վերջին տարիներս տպագրած է՝
Ճաւակ, Նուպարեան **Բառգիրք** և զնգն. դասագիրքեր:



Վ Ա Ն Ա Ն Վ Ը Դ Պ Տ.

128. **Վահան Վ. Տէր Մինասեան.**

Պարտիզակցի այս նշ. առակախօս-գրագետին (1850-1909)
շանեկան ինքնակենսագրութիւնը տէ՛ս «Ամենուն Տարե-
ցոյցը» 1910 տարի: — Լոյսի արտօնատէրը 1898 են մին-
չեւ 1908 իր անունով վարած է Պաղտատչեան տպարանը, ասուր միջադեպի մը նետուանօք
որուն անդրադարձանք վերեւ: — Տպած է Սիրտ: Ճաշակ: Լոյս: Հատընտիրք, են. են.: